Արձանագրություն N 2

2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ արյան մեջ գլյուկոզի որոշման թեստ-երիզների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հրավերի պարզաբանման նիստի

ք. Երևան «14» «Դեկտեմբեր» 2021թ.

ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Զ. Թովմասյան

1. Գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին

(Հ. Խուրշուդյան)

2022 թվակնի դեկտեմբերի 7-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 23:29-ին ստացվել է հարցադրում՝ հանձնաժողովը որոշեց տրամադրել պարզաբանում և հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը հրապարակվել տեղեկագրում:

Մասնակիցների կողմից ստացված հարցումները և տրմադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Հարգելի գնահատող հանձնաժողով.

Տեխնիկական բնութագրում ունեք հետևյալ պահանջ: «Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից»: Այդ պահանջը շատ խիստ սահմանափակում է թեստ երիզներ արտադրողների ցանկը մրցույթին մասնակցելու համար, թողնելով միայն 1-2 արտադրող: Խնդրում ենք տեղեկացնել արդյոք այդքան էական պայման է սա՝ արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ երիզների համար, որը օգտագործվում է ամեն օր: Հնարավոր է արդյոք փոփոխել այս պայմանը՝ մեղմացնելով այն, համապատասխանեցնելով աշխարհում շատ ավելի լայն ընդունված նորմերին և ստանդարտներին, որը հնարավորություն կտա ընդգրկել անհամեմատ շատ ավելի մեծ թվով արտադրողների թեստ երիզներ:

Պարզաբանում N 1

Շաքարային դիաբետ ունեցող 0-18 տարեկան երեխաների պատշաճ սպասարկումը իրականացնելու նպատակով թեստ երիզների տեխնիկական բնութագրում նշված են նեղ մասնագետների կողմից ներկայացված պահանջները, որոնք պարտադիր են, հաշվի առնելով, որ շահառուները հանդիսանում են երեխաներ: Նշեմ, որ ՀՀ ԱՆ-ի կողմից 2015 թվականից այս տեխնիկական բնութագրով հայտարարվել են մրցույթներ և յուրաքանչյուր մրցույթին թեստ երիզների մասով մասնակցել են 4-5 մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Խուրշուդյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022 թվականի դեկտեմբերի 21-ին Առողջապահության նախարարություն, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, 2-րդ հարկ, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

Նախագահ՝ ---------- Հ. Խուրշուդյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Զ. Թովմասյան